

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը). Նախագծերի նպատակը բարձր տեխնոլոգիական ոլորտի, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների համար պետական աջակցության գործիքակազմի և հարկային արտոնությունների շրջանակի վերանայումն է՝ նպատակ ունենալով ստեղծել ավելի բարենպաստ պայմաններ նշյալ ոլորտներում առաջանցիկ զարգացում ապահովելու համար:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության առաջնայնություններից է: Այն տնտեսության գերակա ճյուղերից մեկն է և միևնույն ժամանակ՝ ամենաարագ զարգացող ոլորտներից մեկը, որը նպաստում է երկրի տնտեսության աճին, մրցունակության և արտադրողականության բարձրացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և Հայաստանի Հանրապետության՝ որպես առաջադեմ գիտելիքահենք արդյունաբերությամբ երկրի վարկանիշի բարձրացմանը:

2015 թվականից գործում է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք), որով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի նոր ստեղծվող, սկսնակ տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվում են հարկային արտոնություններ, մասնավորապես, շահութահարկի 0% դրույքաչափի և եկամտային հարկի 10% դրույքաչափի կիրառմամբ¹: Օրենքի շրջանակում տրամադրված հավաստագրերը գործում են 5 տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարողներին ազգային և միջազգային մակարդակում մրցունակ մնալու և զարգանալու հնարավորություն ընձեռելու նպատակով պետական աջակցություն տրամադրելու, ինչպես նաև պետական ու

¹ 2023 թվականի դեկտեմբերի 22-ին Օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում շահութահարկի 0% դրույքաչափի կիրառմամբ հարկային արտոնության տրամադրումը հանվել է:

մասնավոր հատվածների համագործակցության միջոցով գիտելիքահենք տնտեսության զարգացման ուղղությամբ իրական հնարավորություններ ստեղծելու հրամայականով:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Գործող օրենսդրությամբ ոլորտի համար սահմանված են որոշ հարկային արտոնություններ: Մասնավորապես՝

1) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված սկսնակ տնտեսավարող սուբյեկտների վարձու աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների գծով հաշվարկվող եկամտային հարկի դրույքաչափը 10 տոկոս է, ընդհանուր սահմանված 20 տոկոս դրույքաչափի փոխարեն: Օրենքի շրջանակում 2015-2023թթ ընթացքում հարկային արտոնությունից օգտվել են 4,133 տնտեսավարող սուբյեկտ, որոնցից 1,430-ը հավաստագիր է ստացել 2022 թվականին, իսկ 1,633-ը՝ 2023-ին:

2) Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական աշխատանքների կատարումն ազատված է ԱԱՀ-ից,

3) գիտահետազոտական և (կամ) փորձակոնստրուկտորական աշխատանքների ու ծառայությունների վրա կատարվող ծախսերը նվազեցվում են այդ ծախսերի կատարման հարկային տարվա ընթացքում ամբողջովին:

Բացի այդ, Կառավարության առանձին որոշումներով աջակցության ծրագրեր են իրականացվում ոլորտում գործունեություն իրականացնող առանձին տնտեսավարող սուբյեկտների համար՝ պայմանավորված դեռևս 2022 թվականին ստեղծված իրավիճակով ոլորտային մի շարք ընկերությունների տեղափոխումը և մասնագետների ներհոսքը Հայաստան աննախադեպ աճի հնարավորություններ էր ընձեռել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համար: Գրանցվել է նաև ՀՀ-ում SS ոլորտի վարձու աշխատողների թվի շեշտակի աճ: Այսպես, 2022թ-ի փետրվարից մինչև 2023թ-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում SS ոլորտի վարձու աշխատողների թիվը 21.5 հազարից հասել է 34 հազարի, ընդ որում, վարձու աշխատողների թվում օտարերկրացիների մասնաբաժինը 4.1%-ից հասել է 27.3%: Վարձու աշխատողների թվաքանակի հավելաճի առնվազն 44%-ը պայմանավորված է օտարերկրացիների ներհոսքով: 2022թ-ի տարեվերջին SS ոլորտում գործել է վարձու աշխատող չունեցող 2,653

անհատ ձեռնարկատեր, որոնց թիվը 2023թ-ի տարեվերջին հասել է 4,834²: Հատկանշական է նաև այն փաստը, որ ՀՀ տեղափոխված ընկերություններից 9-ն ընդգրկված են ՀՀ SS ոլորտի 20 խոշոր գործատուների թվում դրանք են

- «ՎԻԷՄ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ ³
- «ԴԱՏԱԱՐՏ ԱՄ» ՍՊԸ
- «ԷՊԱՄ ՍԻՍԹԵՄՁ» ՍՊԸ
- «ՔՎԱՆՏՈՐԻ ԱՄ» ՍՊԸ
- «ՆԵՔՍԹԸՐՍ ՍՏՈՒԴԻՈ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ
- «ՏԻՆԿՈՖՖ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ
- «ԲՕՍՏՕՆՋԵՆ ԹԵՔՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ
- «ԸԼԱՅՆ ԹԵՔՆՈԼՈԳԻ» ՍՊԸ
- «Յ. Ե. ՀԱԲ ՀԱՅԱՍՏԱՆ» ՍՊԸ

Խնդիրը կայանում է նրանում, որ աջակցության գործող գործիքակազմը ոլորտի առաջանցիկ զարգացման և տեղափոխված ընկերությունների ու մասնագետների՝ Հայաստանից հնարավոր հեռանալը կանխելու համար բավարար չէ:

Միևնույն ժամանակ, վերջին տարիներին ՀՀ դրամի արժևորումը էական մարտահրավեր է դարձել ոլորտի մրցունակության համար: 2021-2023թթ. ընթացքում ՀՀ դրամն արժևորվել է 22%-ով ԱՄՆ դոլարի, 29%-ով՝ եվրոյի և 32%-ով ՌԴ ռուբլու նկատմամբ: Հաշվի առնելով, որ SS ընկերությունները իրենց արտադրանքի շուրջ 87%-ն արտահանում են, դրամի արժևորումը զգալիորեն նվազեցրել է նրանց մրցունակությունը միջազգային շուկայում: Այս իրավիճակը բացասաբար է անդրադարձել ինչպես տեղական, այնպես էլ Հայաստան տեղափոխված ընկերությունների վրա: Արձագանքելով այս մարտահրավերներին՝ ՀՀ կառավարությունը մշակել է ոլորտի աջակցության մի շարք ծրագրեր⁴:

² https://modex.am/wp-content/uploads/2024/03/IT-study_Modex.pdf Մոդեքս. 2024թ. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանում 2023.

³ «ՎԻԷՄ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն 2023թ-ին հանդիսացել է ՀՀ SS ոլորտի ամենախոշոր հարկատուն (7 մլրդ դրամ, ՀՀ SS ոլորտի ընկերությունների վճարած հարկերի 5.2%-ը)

⁴ ՀՀ կառավարության 24.03.2022թ. թիվ 399-Լ որոշում
ՀՀ կառավարության 01.12.2022թ. թիվ 1863-Լ որոշում
ՀՀ կառավարության 28.12.2023թ. թիվ 2328-Լ որոշում

Բացի այդ, խնդիր է նաև Հայաստանի Հանրապետության մրցունակության ապահովումը, քանի որ շատ երկրներ, առավել ևս տարածաշրջանի և ԱՊՀ անդամ երկրներ ոլորտի համար տրամադրում են լայն շրջանակի արտոնություններ և իրականացնում են աջակցության ծրագրեր՝ նպատակ ունենալով իրենց մոտ տեղափոխել այլ երկրներում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում) գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին:

Հարկային արտոնություններ են սահմանված նաև եվրոպական երկրներում Մասնավորապես, Նիդերլանդների Թագավորությունում, Սերբիայի և Պորտուգալիայի Հանրապետություններում շահութահարկով հարկման բազան որոշելու նպատակով գիտահետազոտական և զարգացման ծախսերը նվազեցվում են կատարված ծախսերի կրկնակի չափով:

Այս ամենը հաշվի առնելով՝ անհրաժեշտություն է առաջացել որդեգրելու բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացման և աջակցության նոր մոտեցումներ, որոնք մի կողմից Հայաստանը գրավիչ կդարձնեն Հայաստան տեղափոխված ՏՏ ընկերությունների և մասնագետների համար, մյուս կողմից տեղական ընկերություններին կդարձնեն ավելի մրցունակ:

Նախագծի ընդունումը կխթանի նաև ոլորտում մասնագիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղված աշխատանքներին:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծերով առաջարկվում է սահմանել հետևյալ հարկային արտոնությունները և բյուջետային աջակցության հետևյալ ուղղությունները:

Հարկային արտոնությունների մասով նախագծերով ներկայացված առաջարկությունները

Նախագծերով, մասնավորապես, առաջարկվում է՝

1) վերաիմաստավորել և վերանայել բարձր տեխնոլոգիական ոլորտում գործունեություն իրականացվող տնտեսավարող սուբյեկտների համար գործող օրենսդրությամբ նախատեսված՝ հարկային արտոնությունների շրջանակը,

2) ընդլայնել գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների (գիտահետազոտական՝ R&D) աշխատանքների մասով գործող հարկային արտոնությունների շրջանակը: Ընդ որում, այս ուղղությամբ առաջարկվող հարկային արտոնությունները վերաբերելու են ոչ միայն բարձր տեխնոլոգիական ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին, այլ բոլոր ոլորտներում գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներ կատարող տնտեսավարող սուբյեկտներին:

Առաջին ուղղությամբ նախագծերով, մասնավորապես, առաջարկվում է հետևյալ հարկային արտոնությունները.

ա. շրջանառության հարկի դրույքաչափի նվազեցում 2.5 անգամ՝ 5 տոկոսի փոխարեն սահմանելով 2 տոկոս,

բ. մասնագիտական աշխատանք կատարող անձնակազմին վճարվող աշխատավարձի 200 տոկոսի չափով շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամուտը հավելյալ նվազեցնելու հնարավորության նախատեսում, բայց ոչ ավելի, քան հաշվարկված հարկման բազայի 50 տոկոսը,

գ. հարկային տարվա ընթացքում մինչև 30 (ներառյալ) աշխատողների միջին ցուցակային թիվ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների ստացած նպատակային դրամական միջոցների շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամուտ ճանաչելու կանոնների վերանայում, այն տրամաբանությամբ, որ այդ դրամական միջոցները եկամուտ ճանաչվեն ոչ թե այն հարկային տարվա ընթացքում, որում ստացվել են, այլ այն հարկային տարվա ընթացքում, որում այդ դրամական միջոցները կամ այդ դրամական միջոցներով ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ:

Երկրորդ ուղղությամբ նախագծերով, մասնավորապես, առաջարկվում է սահմանել հետևյալ հարկային արտոնությունները.

ա. գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներում ներգրավված մասնագիտական անձնակազմին վճարվող աշխատա-

վարձի և դրան հավասարեցված եկամուտների մասով եկամտային հարկի դրույքաչափի կիսով չափ նվազեցում՝ 20-ից 10 տոկոս,

բ. մասնագիտական աշխատանք կատարող անձնակազմին վճարվող աշխատավարձի 200 տոկոսի չափով շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամուտը հավելյալ նվազեցնելու հնարավորության նախատեսում, բայց ոչ ավելի, քան հաշվարկված հարկման բազայի 50 տոկոսը,

գ. շահութահարկով հարկման նպատակով հետազոտության և մշակման աշխատանքների իրականացման համար օգտագործվող հիմնական միջոցների (բացառությամբ՝ հիմնական միջոց համարվող անշարժ գույքի) ամորտիզացիոն նվազագույն ժամկետի սահմանում շահութահարկ վճարողի հայեցողությամբ, բայց ոչ պակաս, քան մեկ տարի:

Ընդ որում, առաջարկվում է սահմանել, որ հետազոտության և մշակման աշխատանքների մասով նշյալ արտոնությունները կիրառվելու են Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող և Կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը արժանացած գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող (այդ թվում՝ սեփական կարիքների համար) տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ:

Բյուջեպային աջակցության մասով նախագծերով ներկայացված առաջարկությունները

Նախագծերով, մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ընդգրկված կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին տրամադրվում է՝

1) ներգրավված վարձու աշխատող հանդիսացող՝ աշխատանքային միգրանտների աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50%-ի չափով աջակցություն,

2) ներգրավված նոր վարձու աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ի չափով աջակցություն, եթե աշխատողների թիվը չի գերազանցում 30-ը, և եկամտային հարկի գումարի 50%-ի չափով աջակցություն, եթե աշխատողների թիվը 31 և ավելի է,

3) կադրերի պատրաստման և վերապատրաստման գծով կատարված ծախսերի (մինչև 31 աշխատող ունեցող սուբյեկտների դեպքում նաև այդ նպատակով կատարված գործուղման ծախսերի) փոխհատուցման նպատակով վարձու աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50%-ի չափով աջակցություն, եթե աշխատողների թիվը չի գերազանցում 30-ը և եկամտային հարկի գումարի 25%-ի չափով աջակցություն, եթե աշխատողների թիվը 31 և ավելի է:

Ընդ որում, առաջարկվում է սահմանել, որ վերոնշյալ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված՝ հաշվետու ժամանակաշրջանի մասով տրամադրվող աջակցությունների գումարները չեն կարող գերազանցել նույն հաշվետու ժամանակաշրջանի մասով աշխատողների գծով հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարի 50%-ը:

Միաժամանակ, վերոնշյալ բյուջետային աջակցության գործիքների կիրառության նպատակով նախագծերով առաջարկվում է սահմանել, որ՝

1) բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակները՝ ըստ տնտեսական գործունեության դասակարգիչների, սահմանում է Կառավարությունը,

2) աջակցությունների տրամադրման կարգերը սահմանում է Կառավարությունը,

3) նոր աշխատողների մասով պետական աջակցությունը տրամադրվում է վարձու աշխատողի՝ առաջին աշխատանքի անցնելու պահից երեք օրացուցային տարիների համար:

Առաջարկվում է նաև սահմանել, որ աջակցությունները տրամադրվում են հարկման ընդհանուր համակարգում և շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2032 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը աջակցությունից օգտվելը սկսելու օրացուցային տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարին լրանալուց հետո կարող է շարունակել օգտվել աջակցությունից, եթե գործում է հարկման ընդհանուր համակարգում:

4. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան բարձր տեխնոլոգիական ոլորտի պետական աջակցության գործիքակազմն է:

5. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագծերը մշակվել են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և քննարկվել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների հետ:

6. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարձր տեխնոլոգիական ոլորտի առաջանցիկ զարգացման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար ձևավորել նպաստավոր պայմաններ: Ակնկալվում է նաև, որ այն խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետության տնտեսության արտադրողականության մրցունակության բարձրացման, գիտելիքահենք տնտեսության զարգացման, տեղեկատվական հասարակության և դրա տարբեր բաղադրիչների ձևավորման, օտարերկրյա ներդրումների ներգրավման, տեղական ընկերությունների արտադրանքի և ծառայությունների արտահանման ու համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զարգացած բարձր տեխնոլոգիաների ոլորտ ունեցող երկրի վարկանիշի բարձրացման համար:

Բացի նշվածից, ակնկալվում է նախագծերի փաթեթով նախատեսված հարկային խթանների և բյուջետային աջակցության գործիքակազմի կիրառության արդյունքում էականորեն բարելավել բարձր տեխնոլոգիական արդյունաբերության գործունեության միջավայրը՝ դրանով իսկ նպաստելով այս ոլորտում տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացմանը: Այս առումով, նաև ակնկալվում է, որ ձևավորվելու են նոր հարկման բազաներ, և ոլորտից հարկերի հավաքագրմամբ ամենամոտ ապագայում փոխհատուցվելու են պետական բյուջեից կատարվող ծախսերն ու պակաս հավաքագրվող հարկային եկամուտների կորուստները:

7. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թվականների ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

Նախագիծը բխում է Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի մի շարք բաժիններով սահմանված քաղաքականության ուղղություններից: Մասնավորապես՝

1) 2.3-րդ «Բարձր տեխնոլոգիաներ» բաժնով սահմանված քաղաքականության ուղղություններից, ըստ որի՝

- հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների կարևորությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության և անվտանգության համար՝ Կառավարությունը շարունակելու է նպաստել նորարարական համակարգի զարգացմանը և տարբեր ոլորտներում համակողմանի ներդրմանը,

- բարձր տեխնոլոգիաների ոլորտում մինչև 2026 թվականը Կառավարությունը նախատեսում է ունենալ շուրջ 35,000 զբաղվածներ և ոլորտի շրջանառությունը հասցնել 500 մլրդ դրամի, որը կկազմի ՀՆԱ-ի 6-7%-ը: 2020 թվականի տվյալներով այս ցուցանիշը 4% է: Այսպիսով, Հայաստանում կստեղծվի առնվազն 16,000 նոր աշխատատեղ բարձր տեխնոլոգիաների ոլորտում,

- բարձր տեխնոլոգիաների ոլորտում Կառավարությունը նպատակադրված է իրականացնել, մասնավորապես, հետևյալ քայլերը.

- բարձր տեխնոլոգիական ոլորտում տեխնոլոգիական կրթության որակական և քանակական բարելավում,

- բարձր տեխնոլոգիական ընկերություններում (ստարտափներում) անհրաժեշտ ներդրումներ ներգրավելու և դրանց հետագա զարգացումն ու համաշխարհային շուկա ելքն ապահովելու նպատակով ֆինանսական գործիքներ ներգրավելու հնարավորությունների շարունակական մեծացում, այդ թվում՝ պետական աջակցության ծրագրերի միջոցով,

- բարձր տեխնոլոգիական ոլորտի առաջանցիկ զարգացման նպատակով տեխնոլոգիական ընկերությունների և բուհերի արդյունավետ համագործակցության խթանում՝ նոր մասնագետների պատրաստման և այլ ոլորտի մասնագետներին վերամասնագիտանալու հնարավորություն ընձեռելու միջոցով,

➤ ոլորտի ընկերությունների բիզնես կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում,

2) 6.8-րդ «Հարկաբյուջետային քաղաքականություն» մասով սահմանված քաղաքականության ուղղություններից, ըստ որի՝

- Հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակը պետական ֆինանսական համակարգի բարձր արդյունավետությունն է: Դրան հասնելու նպատակով Կառավարությունը շարունակելու է հարկային քաղաքականության այնպիսի բարեփոխումները, որոնք նպաստելու են բիզնես միջավայրի մրցունակության բարձրացմանը,

- Կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունն ուղղված է լինելու տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը՝ դրանով իսկ ստեղծելով կայուն նախադրյալներ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային բարիքի վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար: